

ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ԳՈՒՄԱՐՄԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (02.02.2015-11.06.2015) ԵՎ 2015
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-23-Ը ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հինգերորդ գումարման յոթերորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 7 չորսօրյա և 3 արտահերթ նիստ՝ 2-ը ՀՀ կառավարության նախաձեռնությամբ և 1-ը՝ ԱԺ պատգամավորների: Հերթական նստաշրջանի ավարտից հետո գումարվել է 2 արտահերթ նստաշրջան՝ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էր 152 հարց, որից 90-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին, 55-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների, իսկ 7-ը պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր էին: Օրակարգի միջազգային պայմանագրերի վավերացման մասին բաժինն ընդգրկում էր 36 միջազգային համաձայնագիր:

Հետագայում նստաշրջանի օրակարգը լրացվեց ևս 54 հարցով, այդ թվում՝ 29 ՀՀ կառավարության նախաձեռնություն, 18 ՀՀ ԱԺ պատգամավորական նախաձեռնություն և 7 պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող այլ հարցեր: Օրակարգը լրացվել է նաև 15 միջազգային պայմանագրով:

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված 257 հարցերից (ներառյալ միջազգային պայմանագրերը) 188-ը օրենքների նախագծեր կամ նախագծերի փաթեթներ էին, որոնցից գարնանային նստաշրջանի և դրանից հետո գումարված արտահերթ նստաշրջանների ընթացքում քննարկվել և ամբողջությամբ ընդունվել են 47-ը (39-ը ՀՀ կառավարության (13-ը կառավարության որոշմամբ՝ անհետաձգելի), իսկ 8-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների նախաձեռնած նախագծեր էին): Միջազգային

պայմանագրերից զատ քննարկվել է 5 պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարց: Ընդունվել է մեկ ՀՀ ԱԺ հայտարարություն: Մերժվել է ՀՀ ԱԺ-ի մեկ որոշման և 1 կառավարության ներկայացրած օրենքի նախագիծ: Ամբողջությամբ ընդունված 47 օրենքներից կամ օրենքի նախագծերի փաթեթներից 6-ը մայր օրենքներ են, որոնք ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին:

Նստաշրջանի ընթացքում՝

- ՀՀ ԱԺ-ը հաստատեց ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի ձևավորման կարգը:
- ՀՀ ԱԺ-ի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի նախագահ ընտրվեց Սուքիաս Ավետիսյանը, իսկ տեղակալ՝ Թևան Պողոսյանը
- Մելիք Մանուկյանը ՀՀ ԱԺ Նախագահին ներկայացրեց ՀՀ ԱԺ-ի պատգամավորական մանդատից հրաժարվելու մասին իր դիմումը,
- Գրիգոր Մանուկյանը, Դավիթ Քոչարյանը և Մուշեղ Պետոյանը ՀՀ ԱԺ Նախագահին ներկայացրեցին «ԲՀԿ» խմբակցությունից դուրս գալու մասին իրենց դիմումները,
- Քննարկվեց և ընդունվեց «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» ՀՀ ԱԺ որոշումը:
- Քննարկվեց և ընդունվեց ի գիտություն՝
 - Հայաստանի Հանրապետության դատախազության 2014 թվականի գործունեության մասին հաղորդումը:
 - «Հայաստանի Հանրապետության գազամատակարարման համակարգի գործունեությունն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունը»:
 - «Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2015 թվականի տարեկան գործունեության ծրագիրը»:
 - Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի գործունեության ծրագիրը:
 - Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2013 թվականի գործունեության մասին հաղորդումը:
 - Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2013 թվականի տարեկան հաշվետվությունը:

- Քվեարկությամբ հաստատվեց Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2015 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:
- Ընդունվեց Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հայտարարությունը «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ»:

Նստաշրջանի ընթացքում ԱԺ պատգամավորները ՀՀ կառավարությանը դիմել են 52 գրավոր և 44 բանավոր հարցով: Հնչել է 131 պատգամավորական հայտարարություն, որոնցից 40-ը վերաբերում էր գործադիրի գործունեությանը:

Նստաշրջանների ընթացքում վավերացվեց 18 միջազգային պայմանագիր, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի, ջրային ոլորտի և այլ ենթակառուցվածքների բարելավմանը, համայնքների զարգացմանն ուղղված, վարկային և ֆինանսավորման համաձայնագրեր: Ընդունվեցին նաև մեծածավալ ներդրումային ծրագրեր նախատեսող օրենսդրական նախաձեռնություններ, մասնավորապես՝ «Ողջի, Փխրուտի, Արծվանիկի պոչամբարներում կուտակված և կուտակվող, ինչպես նաև «Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության գործունեության արդյունքում գոյացած և գոյացող արտադրական լցակույտերի մշակման ներդրումային ծրագրի մասին» և «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան քաղաքային համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները: